«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--------- ---------- 2019 թվականի N - Ն

Հայաստանի Հանրապետության ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ

ԱՊՐԻԼԻ 17-Ի n 534-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի ««Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» N 534-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման նախաբանում «2-րդ մասի» բառերից հետո «1-3-րդ կետերի և 4-րդ մասի» բառերը փոխարինել «, 3-րդ մասի 2-րդ կետի, 4-րդ և 4.2-րդ մասերի» բառերով.

2) որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետը «քաղաքի» բառից հետո լրացնել «,տարածքների» բառով.

3) որոշման 1-ին կետի 11-րդ ենթակետը «ավարտին» բառից հետո լրացնել «մինչև» բառով.

4) որոշման 1-ին կետի 15-րդ ենթակետը «անմրցունակ» բառից հետո լրացնել «Երևան քաղաքից դուրս բնակվող մանկատան շրջանավարտ հանդիսացող, ազատազրկման վայրերից վերադարձած, հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակ ունեցող» բառերով.

5) որոշման 1-ին կետի 16-րդ ենթակետը «անմրցունակ» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ Երևան քաղաքից դուրս բնակվող մանկատան շրջանավարտ հանդիսացող» բառերով.

6) որոշման 1-ին կետի 22-րդ ենթակետը «անմրցունակ» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ Երևան քաղաքից դուրս բնակվող մանկատան շրջանավարտ հանդիսացող» բառերով, իսկ «երիտասարդ» բառը հանել.

7) որոշման մեջ «նախարարության աշխատակազմ» բառերը փոխարինել «նախարարություն» բառով՝ համապատասխան հոլովաձևերով.

8) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N 2 հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետում «չունեցող» բառից հետո լրացնել «, ինչպես նաև մասնագիտական կրթություն և որակավորում ունեցող, սակայն ստացած մասնագիտությանը համապատասխան վերջին հինգ տարվա ընթացքում աշխատանքային գործունեություն չիրականացնող» բառերը.

9) որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետով հաստատված N 7 հավելվածի՝

ա. 10-րդ կետում «նախահաշիվները (ըստ տարածքային կենտրոնների կամ ամփոփ)» բառերը փոխարինել «նախահաշիվը» բառով,

բ. 11-րդ և 12-րդ կետերում «նախահաշիվներն» բառը փոխարինել «նախահաշիվն» բառով,

գ. 12-րդ կետից հետո լրացնել նոր՝ 12.1-ին կետ հետևյալ բովանդակությամբ.

«12.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վճարման փաստաթղթերն ստանալուց հետո գործակալությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է փոխանցումը կազմակերպության բանկային հաշվեհամարին։»,

դ. 13-րդ կետի 2-րդ և 3-րդ պարբերություններն ուժը կորցրած ճանաչել.

10) որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետով հաստատված N 8 հավելվածի՝

ա. 7-րդ կետը լրացնել նոր՝ 5-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«5) նա սոցիալական դեպքի վարման շրջանակներում սոցիալական աջակցության տարածքային գործակալությունից (բաժնից) ուղղորդված անձ է։»,

բ. 21.4-րդ, 21.7-րդ, 31-րդ, 34-րդ և 36-րդ կետերում «կրկնօրինակը» բառը փոխարինել «պատճենը» բառով,

գ. 21.9-րդ կետում «նախահաշիվները՝ ըստ տարածքային կենտրոնների» բառերը փոխարինել «նախահաշիվը» բառով,

դ. 21.10-րդ և 40-րդ կետերում «նախահաշիվներն» բառը փոխարինել «նախահաշիվն» բառով,

ե. 21.12-րդ և 42-րդ կետերում «երկու» բառը փոխարինել «հինգ» բառով,

զ. 21.13-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում և 21.16-րդ կետում «անձի»

բառից հետո լրացնել «(բացառությամբ հաշմանդամություն ունեցող անձի)» բառերով,

է. 39-րդ կետում «նախահաշիվները (ըստ տարածքային կենտրոնների և ամփոփ)» բառերը փոխարինել «նախահաշիվը» բառով,

ը. 43-րդ կետի 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

11) որոշման 1-ին կետի 11-րդ ենթակետով հաստատված N 11 հավելվածի՝

ա. 1-ին կետից հանել «, առնվազն երեք ամիս գործազուրկի կարգավիճակում գտնվող» բառերը,

բ. 7-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

գ. 23-րդ կետում «նախահաշիվներն» բառը փոխարինել «նախահաշիվն» բառով.

12) որոշման 1-ին կետի 12-րդ ենթակետով հաստատված N 12 հավելվածի՝

ա. 1-ին կետից հանել «առնվազն երեք ամիս գործազուրկի կարգավիճակում գտնվող՝» բառերը,

բ. 3-րդ կետում «3» թիվը փոխարինել «մինչև 6» թվով,

գ. 6-րդ կետից հանել «Ընդ որում, բանակցությունների արդյունքում ընտրված գործատուի հետ մեկ տարվա ընթացքում կարող է կնքվել առավելագույնը երկու պայմանագիր։» նախադասությունը,

դ. 7-րդ կետում «կրկնօրինակը» բառը փոխարինել «պատճենը» բառով,

ե. 8-րդ կետի 3-րդ ենթակետում «հարկը» բառից հետո լրացնել «դրոշմանիշային վճարը» բառերով և ենթակետը «տեղեկանք» բառից հետո լրացնել «, ինչպես նաև աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում աշխատողի հետ վերջնահաշվարկ կատարելու համար» բառերով,

զ. 8-րդ կետը լրացնել նոր՝ 4-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«4) գործատուի մոտ աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը կազմակերպող մասնագետին ամսական կտրվածքով վճարվում է գումար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով.»,

է. 14-րդ կետում «նախահաշիվները՝ ըստ տարածքային կենտրոնների» բառերը փոխարինել «նախահաշիվը» բառով,

ը. 15-րդ կետում «ըստ տարածքային կենտրոնների ծախսերի նախահաշիվներն» բառերը փոխարինել «ծախսերի նախահաշիվն» բառերով,

թ. 16-րդ կետում «նախահաշիվներն» բառը փոխարինել «նախահաշիվն» բառով,

ժ. 17-րդ կետում «երկու» բառը փոխարինել «հինգ» բառով,

ժա. 19-րդ կետի երրորդ նախադասության մեջ «Գործազուրկի» բառից հետո լրացնել «(բացառությամբ հաշմանդամություն ունեցող անձի)» բառերը,

ժբ. 23-րդ կետում «15» թվերը փոխարինել «18» թվով.

13) որոշման 1-ին կետի 13-րդ ենթակետով հաստատված N 13 հավելվածի՝

ա. 5-րդ կետի առաջին նախադասության մեջ «երեք» բառը փոխարինել «երկու» բառով,

բ. 13-րդ կետում «3» թիվը փոխարինել «2» թվով, իսկ «36» թիվը՝ «24» թվով,

գ. 16.1-ին կետում «երկու» բառը փոխարինել «հինգ» բառով և կետից հետո լրացնել նոր՝ 16.2-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«16.2. Սույն կարգի 16-րդ կետի 1-3-րդ ենթակետերով նախատեսված միջոցները սահմանված կարգով ստացվելուց հետո գործակալությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում է գործազուրկի հաշվարկային հաշվին։»,

դ. 19-րդ կետում «նախահաշիվները (ըստ տարածքային կենտրոնների և ամփոփ)» բառերը փոխարինել «նախահաշիվը» բառով,

ե. 20-րդ և 21-րդ կետերում «նախահաշիվներն» բառը փոխարինել «նախահաշիվն» բառով,

զ. 23-րդ և 24-րդ կետերում «երեք» բառը փոխարինել «երկու» բառով, «36» թիվը՝ «24» թվով,

է. 23-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում «գործազուրկի» բառերից հետո լրացնել «(բացառությամբ հաշմանդամություն ունեցող անձի)» բառերը,

ը. 23-րդ կետից հետո լրացնել նոր՝ 23.1-ին, 23.2-րդ և 23.3-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«23.1. Այլ վայրում աշխատանքի տեղավորման դեպքում՝ գործազուրկին հատուցված նյութական ծախսերը ենթակա չեն վերադարձման, եթե գործազուրկն աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո ծրագրի իրականացման ժամանակահատվածում լուծում է աշխատանքային պայմանագիրը և այն լուծելուց հետո մեկամսյա ժամկետում աշխատանքի է անցնում նույն վայրում այլ գործատուի մոտ՝ առնվազն սույն կարգի 14-րդ կետում նշված աշխատանքային պայմանագրով սահմանված ժամկետով:

23.2. Սույն կարգի 23.1-ին կետով նախատեսված դեպքում այլ գործատուի հետ աշխատանքային պայմանագիր կնքելուց հետո դրա պատճենը գործազուրկը

երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տարածքային կենտրոն:

23.3. Սույն կարգի 23.1-ին կետում նշված այլ գործատուի հետ կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետից շուտ լուծման դեպքում գործատուին և գործազուրկին հատուցված նյութական ծախսերը ենթակա են վերադարձման գործազուրկի (բացառությամբ հաշմանդամություն ունեցող) կողմից:».

14) որոշման 1-ին կետի 14-րդ ենթակետով հաստատված N 14 հավելվածի՝

ա. 2-րդ կետի 15-րդ ենթակետում «և» շաղկապը փոխարինել «, այդ թվում՝» բառերով,

բ. 2-րդ կետը լրացնել նոր՝ 16-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«16) անձը Երևան քաղաքից դուրս բնակվող մանկատան շրջանավարտ է:».

15) որոշման 1-ին կետի 15-րդ ենթակետով հաստատված N 15 հավելվածի՝

ա. վերնագիրը «ԱՆՄՐՑՈՒՆԱԿ» բառից հետո լրացնել «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻՑ ԴՈՒՐՍ ԲՆԱԿՎՈՂ ՄԱՆԿԱՏԱՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԱԾ, ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ «ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱ» ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ» բառերով,

բ. 1-ին կետը «միջնորդությամբ» բառից հետո լրացնել «Երևան քաղաքից դուրս բնակվող մանկատան շրջանավարտ հանդիսացող, ազատազրկման վայրերից վերադարձած,» բառերով,

գ. 3.2-րդ կետը լրացնել նոր՝ 5-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«5) նա սոցիալական դեպքի վարման շրջանակներում սոցիալական աջակցության տարածքային գործակալությունից (բաժնից) ուղղորդված անձ է:»,

դ. 7-րդ կետում «վեց օրացուցային ամիս» բառերը փոխարինել «մեկ տարի» բառերով,

ե. 8-րդ կետում «մինչև վեց օրացուցային ամիս ժամկետով» բառերը փոխարինել «ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածում» բառերով,

զ. 11-րդ կետում «մեկ ու կես տարի» բառերը փոխարինել «երկու տարի» բառերով, «18» թիվը՝ «24» թվով, «6» թիվը՝ «12» թվով,

է. 31-րդ կետի 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

ը. 31-րդ, 31.1-ին և 35-րդ կետերում «մեկուկես» բառերը փոխարինել «երկու» բառերով, «18» թվերը՝ «24» թվերով.

16) որոշման 1-ին կետի 16-րդ ենթակետով հաստատված N 16 հավելվածի՝

ա. վերնագիրը «ԱՆՄՐՑՈՒՆԱԿ» բառից հետո լրացնել «, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻՑ ԴՈՒՐՍ ԲՆԱԿՎՈՂ ՄԱՆԿԱՏԱՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ» բառերով,

բ. 3-րդ կետում «և առնվազն երեք ամիս գործազուրկի կարգավիճակում գտնվող» բառերը փոխարինել «այդ թվում՝ Երևան քաղաքից դուրս բնակվող մանկատան շրջանավարտ հանդիսացող» բառերով,

գ. 27-րդ և 56-րդ կետերում «նախահաշիվները (ըստ տարածքային կենտրոնների և ամփոփ)» բառերը փոխարինել «նախահաշիվը» բառերով,

դ. 28-րդ, 29-րդ 57-րդ և 58-րդ կետերում «նախահաշիվներն» բառերը փոխարինել «նախահաշիվն» բառերով,

ե. 30-րդ և 59-րդ կետերում «երկու» բառերը փոխարինել «հինգ» բառերով,

զ. 42-րդ կետի 1-ին ենթակետից հանել «հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և» բառերը, «ընտանեկան» բառից հետո լրացնել «կամ սոցիալական» բառերը և կետը լրացնել նոր՝ 5-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«5) նա սոցիալական դեպքի վարման շրջանակներում սոցիալական աջակցության տարածքային գործակալությունից (բաժնից) ուղղորդված անձ է:».

17) որոշման 1-ին կետի 17-րդ ենթակետով հաստատված N 17 հավելվածի 17-րդ կետում «կրկնօրինակը» բառը փոխարինել «պատճենը» բառով.

18) որոշման 1-ին կետի 18-րդ ենթակետով հաստատված N 18 հավելվածի 3.1-ին կետը լրացնել նոր՝ 5-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«5) նա սոցիալական դեպքի վարման շրջանակներում սոցիալական աջակցության տարածքային գործակալությունից (բաժնից) ուղղորդված անձ է:».

19) որոշման 1-ին կետի 19-րդ ենթակետով հաստատված N 19 հավելվածի՝

ա. 3-րդ կետում «Ծրագիրն» բառից հետո լրացնել «առաջնահերթության կարգով» բառերով,

բ. 4-րդ կետի 1-ին ենթակետում «որի» բառը փոխարինել «ինքն ու իր» բառերով,

գ. 5-րդ կետը լրացնել նոր՝ 5-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«5) նա սոցիալական դեպքի վարման շրջանակներում սոցիալական աջակցության տարածքային գործակալությունից (բաժնից) ուղղորդված անձ է:»,

դ. 14-րդ կետը լրացնել նոր՝ 6-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«6) մասնակցում է ծրագրի իրականացման մոնիթորինգի աշխատանքներին։».

20) որոշման 1-ին կետի 21-րդ ենթակետով հաստատված N 21 հավելվածի՝

ա. 7-րդ կետում «աշխատաշուկայում անմրցունակ» բառերը փոխարինել «գործազուրկի կարգավիճակ ստացած» բառերով և կետը լրացնել նոր՝ 5-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«5) ովքեր սոցիալական դեպքի վարման շրջանակներում սոցիալական աջակցության տարածքային գործակալությունից (բաժնից) ուղղորդված անձինք են։»,

բ. 8-րդ կետում «աշխատաշուկայում անմրցունակ անձի կարգավիճակ ստացածին» բառերը փոխարինել «ավելի վաղ հաշվառվածներին՝ ըստ հաշվառման հերթականության» բառերով.

21) որոշման 1-ին կետի 22-րդ ենթակետով հաստատված N 22 հավելվածի՝

ա. վերնագիրը և օրինակելի ձև N 1-ի վերնագիրը «ԱՆՄՐՑՈՒՆԱԿ» բառերից հետո լրացնել «, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻՑ ԴՈՒՐՍ ԲՆԱԿՎՈՂ ՄԱՆԿԱՏԱՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ» բառերով, իսկ «ԵՐԻՏԱՍԱՐԴ» բառերը հանել.

բ. 1-ին կետը «անմրցունակ» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ Երևան քաղաքից դուրս բնակվող մանկատան շրջանավարտ հանդիսացող» բառերով, հանել «առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող» և «երիտասարդ (մինչև 30 տարեկան)» բառերը,

գ. 2-րդ կետում «և առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի» բառերը փոխարինել «անձանց» բառով,

դ. 3-րդ կետը լրացնել նոր՝ 4-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«4) սոցիալական դեպքի վարման շրջանակներում սոցիալական աջակցության տարածքային գործակալությունից (բաժնից) ուղղորդված անձ է։»,

ե. 11-րդ կետում «նախահաշիվները՝ ըստ տարածքային կենտրոնների» բառերը փոխարինել «նախահաշիվը» բառով,

զ. 12-րդ կետում «ըստ տարածքային կենտրոնների ծախսերի նախահաշիվներն» բառերը փոխարինել «ծախսերի նախահաշիվն» բառերով,

է. 13-րդ կետում «նախահաշիվներն» բառը փոխարինել «նախահաշիվն» բառով,

ը. 18-րդ կետում «երկու» բառը փոխարինել «հինգ» բառով,

թ. օրինակելի ձև N 1-ի 1-ին կետը անմրցունակ» բառից հետո լրացնել «, այդ

թվում՝ Երևան քաղաքից դուրս բնակվող մանկատան շրջանավարտ հանդիսացող» բառերով» և հանել «առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող» բառերը,

ժ. օրինակելի ձև N 1-ի 5-րդ կետի 3-րդ ենթակետից հանել «, ինչպես նաև վճարել գործազուրկի կրթաթոշակից հաշվարկվող եկամտային հարկը և օրենքով սահմանված դեպքերում՝ նպատակային սոցիալական վճարը» բառերը.

22) որոշման 1-ին կետի 23-րդ ենթակետով հաստատված N 23 հավելվածի՝

ա. 3-րդ կետը «աշխատանքի» բառից հետո լրացնել «,և որոնց ընտանիքի (կնոջ և ամուսնու) միջին եկամուտը տվյալ պահին նախորդող տասներկուամսյա ժամանակահատվածում (ամուսնու (կնոջ) անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նախորդ տարվա ընթացքում ստացած միջին եկամուտը) չի գերազանցում 350,0 հազար դրամը» բառերով:

բ. 4-րդ կետի 1-ին ենթակետն ուժը կորցրած ճանաչել և կետը լրացնել նոր՝ 6-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«6) ովքեր սոցիալական դեպքի վարման շրջանակներում սոցիալական աջակցության տարածքային գործակալությունից (բաժնից) ուղղորդված անձինք են:»,

գ. 5-րդ կետից հետո լրացնել նոր՝ 5.1-ին կետ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Ծրագրում ընդգրկվելու պահին շահառուն ներկայացնում է գործատուի կողմից տրված տեղեկանք՝ իր և ամուսնու (կնոջ) տվյալ պահին նախորդող տասներկուամսյա ժամանակահատվածում ստացած միջին եկամտի վերաբերյալ:»,

դ. 8-րդ կետի 1-ին ենթակետից հանել «և իր միջին ամսական աշխատավարձի չափի» բառերը,

ե. 8-րդ կետի 2-րդ ենթակետում և 9-րդ կետում «կրկնօրինակը» բառը փոխարինել «պատճենը» բառով,

զ. 10-րդ կետում «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը» բառերը փոխարինել «55,0 հազար դրամը» բառերով,

է. 10-րդ և 21-րդ կետերում «երկու» բառը փոխարինել «երեք» բառով,

ը. 14-րդ կետում «ըստ տարածքային կենտրոնների ծախսերի նախահաշիվներն» բառերը փոխարինել «ծախսերի նախահաշիվն» բառերով,

թ. 15-րդ կետում «նախահաշիվներն» բառը փոխարինել «նախահաշիվն» բառով,

ժ. 19-րդ կետում «երկու» բառը փոխարինել «հինգ» բառով,

ժա. 25-րդ և 27-րդ կետերում «34» թվերը փոխարինել «45» թվերով,

ժբ. օրինակելի ձևի 4-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունում և 5-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունում «կրկնօրինակը» բառերը փոխարինել «պատճենը» բառերով,

ժգ. օրինակելի ձևի 5-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունն ուժը կորցրած ճանաչել,

ժդ. օրինակելի ձևի 7-րդ կետում «երկու» բառը փոխարինել «երեք» բառով,

ժե. օրինակելի ձևի 7-րդ կետում «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը» բառերը փոխարինել «55,0 հազար դրամը» բառերով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ սույն որոշման 1-ին կետի 12-րդ ենթակետի «բ» պարբերությունը և 22-րդ ենթակետի «ա», «գ», «դ», «է», «ժա», «ժգ» և «ժդ» պարբերություններն ուժի մեջ են մտնում 2020 թվականի հունվարի 1-ից։